

## Տ. ՆԱՀԱՊԵՏ ՔԱՀԱՆԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ
(ավազանի անունը՝ Հովհաննես)

Ծնվել է 1979 թ. մարտի 11-ին քաղաքամայր Երևանում:

1984-1994 թթ. սովորել է Երևանի № 172 միջնակարգ դպրոցում:

1994-2000 թթ. սովորել է Գևորգյան Հոգևոր Ճեմարանում:

2000 թ. մարտի 2-ին, ձեռամբ Գերաշնորհի Տ. Նավասարդ եպս. Կճոյանի, ստացել է սարկավագական աստիճան:

2000-2001 թթ. աշխատել է Վեհարանում՝ որպես գործավար-քարտուղար, միաժամանակ Հայաստանի Ամերիկյան համալսարանում հետևելով Բիզնես-մենեջմենթի դասընթացին:

2001 թ. նոյեմբերի 6-ին պաշտպանել է ավարտաճառ՝ «Հայ-Բյուզանդական եկեղեցական կապերը IX-XI դդ.» թեմայով:

2001 թ. ծառայության է անցել Վազգեն Սարգսյանի անվան մոտոհրաձգային գնդում՝ որպես հոգևոր սպասավոր:

2002 թ. սեպտեմբերի 1-ին, Ս. Աստվածածնի գոտու գյուտի տոնի օրը, ձեռամբ Գերաշնորհի Տ. Սիոն եպս. Ադամյանի, ձեռնադրվել է ամուսնացյալ քահանա: